ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Լ. Հովակիմյանի (լիազորագիր, տրված՝ 09.03.2020թ)

քննելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 06.03.2020թ. ներկայացված (09.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/28 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ասատրյանս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.03.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների

համար հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի և «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովումը:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը, որ մասնակիցները հնարավորություն ունենան շտկել հայտնաբերված թերությունը:

Այնուհետև՝ 03.03.2020թ. gnumner.am էլեկտրոնային կայքից Ըներությունը տեղեկացել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ոչ աշխատանքային օրվա ընթացքում նիստ է հրավիրվել, որի արդյունքում «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորում են վկայակոչվել են հետևյալ իրավական նորմերն ու փաստական հանգամանքները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը,

ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ընկերությունը պնդել է, որ «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ շտկման արդյունքում «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված վճարման անդորրագրերը հիմք ընդունելով հայտերը գնահատել բավարար, մասնավորապես՝

1. «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն ներկայացրել է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի վճարման անդորրագիր «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կնիքով՝ թվագրված 02.03.2020թ.:
2. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ն ներկայացրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վճարման անդորրագիր՝ թվագրված 29.02.2020թ.:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 28.02.2020թ. ժամը 10:00-ն:

Մինչդեռ «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից շտկման արդյունքում ներկայացված վճարման անդորրագրերը ներկայացված են հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 29.02.2020թ. և 02.03.2020թ., այնինչ Ընթացակարգի հրավերի 7.4 կետով հստակ սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված…:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված

հայտերը հրավերի պահանջներին բավարար գնահատելու մասին որոշումները դադարեցնելուն:

«Ասատրյանս» ՍՊԸ-ն՝ պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.03.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, որն էլ իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

Ընկերությունը ի լրումն բողոքի հայտնել է հետևյալը.

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից պահանջվող հայտի ապահովումները ներկայացված չեն եղել:

Գնահատող հանձնաժողովի կողմից՝ վերը նշված երկու մասնակիցներին հնարավորություն է տրվել շտկելու հայտնաբերված թերությունը, ինչի արդյունքում «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացվել են՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի վճարման անդորրագիր՝ թվագրված 02.03.2020թ. և «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վճարման անդորրագիր՝ թվագրված 29.02.2020թ.:

Համաձայն հրավերի 7.4 կետի՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Նշված դրույթը իմպերատիվ սահմանում է, որ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները պարտավոր են ներկայացնել հայտի ապահովում՝ նվազագույնը հայտեր ներկայացնելու վերջնաժամկետի օրով, այն է՝ 28.02.2020թ., որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ բավարար գնահատել «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների հայտերը՝ Հրավերի 7.4 կետի դրույթով սահմանված պահանջներին:

«Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից շտկման արդյունքում՝ ներկայացված հայտի ապահովումները (կանխիկ փողի տեսքով) վճարվել են հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ համապատասխանաբար 29.02.2020թ. և 02.03.2020թ., ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունների հայտերը բավարար գնահատելը ոչ իրավաչափ է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի պահանջներից:

Ըստ Ընկերության հայտնած դիրքորոշման՝ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից քննվել և հետևաբար կայացվել է որոշում գրեթե նմանատիպ փաստական հանգամանքով, այն է՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/07 որոշում:

Ընկերությունը վկայակոչել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ընկերությունը վերը նշված հանգամանքի հետ կապված ներկայացրել է հետևյալ դիտարկումները.

Եթե բողոքներ քննող անձը գտնի, որ բողոքը ենթակա է մերժման, ապա դրանով իսկ անհավասար պայմաններ կառաջացնի ընթացակարգի այլ մասնակիցների նկատմամբ, մասնավորապես՝ ընթացակարգի մասնակցության հայտ են ներկայացրել թվով 8 ընկերություններ, որոնցից 6-ը կատարել են համապատասխան վճարումներ և սահմանված ժամկետում ներկայացրել հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի տեսքով, իսկ սույն բողոքով վիճարկվող 2 ընկերությունները, որոնք կարծես թե միտումնավոր չներկայացնելով հայտի ապահովումներ գործել են այնպես, որ եթե ճանաչվեն առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ՝ նոր միայն կկատարեն վճարումներ և կներկայացնեն հայտի ապահովում, սակայն բաց թողնելով այն կարևորագույն փաստը, որ հայտի ապահովումները կլինեն թվագրված հայտերի բացման վերջնաժամկետը լրանալուց հետո: Փաստորեն այդ մասնակիցների կողմից փաստաթուղթը՝ հայտի ապահովումը ներկայացվել է շտկման ամսաթվով, որով խախտվել է հրավերի պահանջը՝ հայտի ապահովումը ներկայացնելու հայտի ամսաթվով վավեր լինելու մասով:

Հաջորդ դիտարկումն այն է, որ եթե հայտերի բացման օրը, այն է՝ 28.02.2020թ. գնահատող հանձնաժողովը արձանագրելով, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից թույլ է տրվել ստանձնած պարտավորության

խախտում կամ հենց 28.02.2020թ. վերը նշված երկու ընկերություններին տալով շտկելու հնարավորություն՝ ստացվեր մի իրավիճակ, որ մասնակիցները չկատարեին շտկումը՝ դրանով իսկ թույլ տալով ստանձնած պարտավորության խախտում, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր ընկերությունների հայտերը և համապատասխան հիմքերն ուղարկեր ՀՀ ՖՆ, չունենալով հայտերի բացման օրվա դրությամբ հայտի ապահովումներ արդյունքում ինչպես էր գանձելու հայտի ապահովմամբ սահմանվող գումարը:

Ընկերությունը խնդրել է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ ՀՀ վարչապետի որոշմամբ ս.թ. մարտի 2-6-ն ընկած ժամանակահատվածը բուհական և այլ ուսումնական հաստատություններում եղել է ոչ աշխատանքային, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է 03.03.2020թ. հրավիրել նիստ՝ իրականացնել գնահատում և սահմանել անգործության ժամկետ, ինչպես նաև նշել է, որ ս.թ. մարտի 2-6-ը ոչ աշխատանքային օրեր եղած լինելու մասին փաստում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին պահանջվող փաստաթղթերը ուղարկելու հետ միասին ներկայացված գրությունը:

Ելնելով վերը շարադրված փաստերից՝ Ընկերությունը խնդրել է իր կողմից 06.03.2020թ. ներկայացված բողոքը բավարարել:

<u>2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 11.03.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված է եղել 28.02.2020թ.: Տվյալ մրցույթի մասնակցության հայտ են ներկայացրել թվով 8 կազմակերպություններ, որոնցից 5 կազմակերպությունների հայտերը գնահատվել են բավարար, «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի, «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների հետ ներկայացված չեն եղել հայտի ապահովումները: 28.02.2020թ. մրցույթային հանձնաժողովը իր թիվ 3 արձանագրությամբ փաստել է անհամապատասխանությունը և համաձայն Կարգի 41-րդ

կետի՝ ծանուցել է «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ին, «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերություններին, որ մինչև 02.03.2020թ. անհրաժեշտ է ներկայացնել (մեկ աշխատանքային օրվա ընթացքում) շտկում՝ հայտերի ապահովումների մասով: «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից՝ 29.02.2020թ.-ին և «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից՝ 02.03.2020թ.-ին ներկայացվել են վճարման անդորրագրեր, «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտի ապահովում շտկման միջոցով չի ներկայացրել: Արդյունքում՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների հայտերը գնահատվել են բավարար՝ համաձայն վերը նշված Կարգի 42-րդ կետի, իսկ «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: Շտկման արդյունքում հայտերի բավարար գնահատման հիմք է հանդիսացել ինչպես Կարգը, որով հնարավորություն է տրվում շտկել անհամապատասխանությունները (բացի գնային առաջարկից), այնպես էլ այն հանգամանքը, որ մեկ աշխատանքային օր տարբերությամբ ներկայացված հայտի ապահովումները որևէ կերպ սահմանափակումներ չեն կարող ստեղծել ԵՊՀ-ի կողմից դրանց կիրառման անհրաժեշտության դեպքում:

Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ նույն Կարգի համաձայն՝ հնարավորություն է տրվում շտկել օրինակ էլեկտրոնային ստորագրության բացակայությունը, ինչի անհրաժեշտության դեպքում նույնպես կարող էր լինել ամսաթվային անհամապատասխանություն: Այս տրամաբանությամբ, ենթադրվում է, որ հայտը շտկման կարիք ունենալու դեպքում դեռ չի համարվում լիարժեք ներկայացված, առկա է բացթողում, որը համաձայն Կարգի, ենթակա է շտկման, մասնակցի կողմից շտկման հնարավորության իրավունքից օգտվելու կամ այն չօգտագործելուց հետո միայն հայտը համարվում է վերջնական գնահատման ենթակա և կամ բավարար է գնահատվում կամ մերժվում է:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ 02.03.2020թ.-ին ՀՀ-ում եղել է աշխատանքային օր, իսկ ԵՊՀ-ում 02.03.20-08.03.2020թ. կասեցված են եղել դասապրոցեսները, իսկ հանձնաժողովի, որի անդամները ԵՊՀ վարչական մասի աշխատակիցներ են, նիստի գումարման օրվա ոչ աշխատանքային լինելու կապակցությամբ ՀՀ կառավարության որոշում չի եղել:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.03.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը իր կարիքների համար աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

3. «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն ներկայացրել է որպես հայտի ապահովում կանխիկ փողի ձևով «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում 02.03.2020թ. «900008000466» գանձապետական հաշվին 150 000 ՀՀ դրամ գումարի չափով կատարված վճարման անդորրագիր:

4. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ն ներկայացրել է որպես հայտի ապահովում կանխիկ փողի ձևով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 29.02.2020թ. «900008000466» գանձապետական հաշվին 300 000 ՀՀ դրամ գումարի չափով կատարված վճարման անդորրագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 06.03.2020թ. ներկայացված բողոքը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 11.03.2020թ. թիվ 01/238-20 գրությունը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ .

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի **<u>կամ կանխիկ փողի ձևով</u>**: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը

լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ **կանխիկ փողի ձևով:**

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:**

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ **եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ **եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:**

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.1 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ **սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում**:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) **կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ**

տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Այսպիսով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը իր կարիքների համար աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.02.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի, «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների մոտ բացակայել են հրավերով պահանջված հայտի ապահովումները: Հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը՝ մասնակիցներին հնարավորություն տալով շտկելու անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ սահմանված կարգով կանխիկ փողի փևով հայտի ապահովում են ներկայացրել՝ Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲ և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների հայտերը գնահատվել են բավարար:

Այսպիսով՝ Ընկերությունը բողոքով հայտնում է, որ «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ տալ շտկման «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը, այս տեսանկյունից հայտնում եմ, որ Կարգի 40-րդ կետը հստակ սահմանում է, թե որ դեպքում են հայտերը մերժվում, մասնավորապես՝ **հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն**

կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի,այն է՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, **ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը**, իսկ 42-րդ կետի համաձայն՝ **սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար,** ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և հիմնավորված՝ բխում են վերը շարադրված իրավական նորմերից:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Այս տեսանկյունից Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես **հայտի,** այնպես էլ պայմանագրի **ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:**

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է այն դեպքերը, որոնց պարագայում մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Ընդ որում՝ նույն կետով սահմանվում է հայտի ապահովման ձևերը, այն է՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ **կանխիկ փողի ձևով**:

Տվյալ դեպքում՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն հայտնել է, որ հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90

(իննսուն) աշխատանքային օր, **մինչդեռ «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից հայտի ապահովումը ներկայացվել է կանխիկ փողի ձևով, հետևաբար ժամկետի վերաբերյալ հարցը նման պայմաններում՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման դեպքում, ենթակա չէ քննարկման:**

Անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչած այն հանգամանքին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ոչ աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ 02.03.2020թ. նիստ է հրավիրվել, հարկ եմ համարում նշել հետևյալը.

«Տոների եվ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ **կառավարությունը կարող է աշխատանքային օրերը տեղափոխել, սակայն նշված դեպքում մարտի 02-ը, որպես աշխատանքային օր մեկ այլ օր տեղափոխելու վերաբերյալ կառավարության որոշում չի կայացվել:**

Միևնույն ժամանակ Պատվիրատուի կողմից ներկայացվել է ԵՊՀ ռեկտորի կողմից 01.03.2020թ. ԵՊՀ աշխատակազմին ուղարկված էլեկտրոնային հաղորդագրության (ուղարկված rectorate@ysu.am էլեկտրոնային փոստի հասցեից noreply@ysu.am էլեկտրոնային փոստի հասցեին) պատճենը, համաձայն որի՝ ԿԳՄՍ նախարարությունում ՀՀ վարչապետի գլխավորությամբ կայացած խորհրդակցության ընթացքում որոշվել է ԲՈՒՀ-երում և մյուս ուսումնական հաստատություններում մարտի 2-ից 8-ը ներառյալ դադարեցնել դասերը, սակայն ԵՊՀ աշխատակազմին, պրոֆեսորադասախոսական և օժանդակ կազմը հաջորդ օրը՝ 02.03.2020թ. խնդրել են ներկայանալ աշխատանքի:

Այսպիսով գտնում եմ, որ Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի կողմից ոչ աշխատանքային օրվա ընթացքում նիստ է հրավիրվել, որի արդյունքում «Ֆոր Էյ Քնսալթինգ» և «Թրասթ Աուդիտ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար նույնպես անհիմն է:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 06.03.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**